

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՐՑԱԽԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄԲ

Երեւանցիներուն համար Օփերայի հրապարակը կարծես ժամադրաւայր է: Ամէն օր, երեւանցիները պարտաւորութիւն կը զգան կարծես հաւաքուելու հոն տեղեկանալու համար վերջին անցուդարձերուն:

Զինուորական ուժերը արդէն հեռացած են Բաղախէն, Երեւան տանող գլխաւոր պողոտաներուն վրայ հաստատելով իրենց կենդրոնները, առանց սակայն անցարգելներ հաստատելու ու ստուգումներ կատարելու:

Ղարաբաղի շրջանին մէջ, որոշ հանդարտութիւն կը տիրէ բանակին հսկողութեան տակ: Մասնաւորաբար Հայաստանէն մեծ օգնութիւն կը փութացուի Արցախի հայորդիներուն, որպէսզի այդ շրջանի բնակչութիւնը յաջողի դիմագրաւել իր դէմ ցցուող դժուարութիւնները:

Ընդհանուր արմամբ Երեւանի մէջ կը տիրէ ամբոխային վիճակ: Զգալի բաց մը գոյութիւն ունի ժողովուրդին և ղեկավարութեան միջեւ:

Միւս կողմէ, Հայաստանի ղեկավարութեանց մօտ կը տիրէ այն կարծիքը, թէ Մոսկուայի մէջ մօտ օրէն կրնան կարգադրութիւններ կատարուիլ, ինքնավար մարզերու կապակցութեամբ, որոնք կրնան անկախ հանրապետութիւններ հռչակուիլ, որոնց կարգին նաեւ Հայկական Ղարաբաղն ու Նախիջեւանը: